<<ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. <<Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 637-Ն որոշման համաձայն՝ վերանվանվել է <<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության:

<<Բույսերի կարանտինի ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի <<Բույսերի կարանտինի ծառայություն>> պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին>> N 1913-Ն որոշմամբ՝<<Բույսերի կարանտինի ծառայություն>> պետական փակ բաժնետիրական ընկերության (գրանցված ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից 31,01,2003թ, գրանցման թիվ 278 210 03355, վկայական 03Ա 058969) և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 13-ի N 102-Ա որորշման համաձայն՝ <<Բույսերի կարանտինի ծառայություն>> պետական ոչ առևտրային

կազմակերպությունը վերակազմակերպվել է նրան՝<<Բույսերի պաշտպանության ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը (գրանցված ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Շահումյանի տարածքային բաժնի կողմից 03.02.2003թ, գրանցման թիվ 290 210 02832, վկայական 03Ա 056267 գտնվելու վայրը՝ ք.Երևան Իսակովի պող. N 22) միացնելու ձևով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով:

4. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, սահմանված կարգով բացված բանկային հաշիվներ, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ (հայերեն, ռուսերեն, անգլերեն) կլոր կնիք ու դրոշմակնիք:

Կազմակերպությունն ունի իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

5. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

6. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփական գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

8. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ,

ռուսերեն լրիվ՝ Государственная некоммерческая организация <<Центр по оказанию услуг в области ветеринарной санитарии, безопасностн пищевых продуктов и фитосанитарии>>.

ռուսերեն կրճատ՝ ГНКО <<Центр по оказанию услуг в области ветеринарной санитарии, безопасностн пищевых продуктов и фитосанитарии>>.

անգլերեն լրիվ ՝ << Centre of the Veterinarian Sanitary, Food Safety and Phitosanitary Services>> State Non-Commercial Organization.

անգլերեն կրճատ՝ << Centre of the Veterinarian Sanitary, Food Safety and Phitosanitary Services>> SNCO.

9. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Մամիկոնյանց 39ա:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

10.<<1) <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝

ա.բույսերի պաշտպանության ու կարանտինի, անասնաբուժության բնագավառներում պետական ծրագրերի իրականացումը,

բ. բույսերի ոչ կարանտին վնասակար օրգանիզմների ուսումնասիրության իրականացումը,

գ. Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հակաանասնահամաճարակային միջոցառումների, կենդանիների կարանտինային հիվանդությունների առաջացման դեպքում աշխատանքների իրականացումը,

դ. գյուղատնտեսական կենդանիների հաշվառման, համարակալման և գրանցման միջոցառումների իրականացումը,

ե. մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

զ. անասնաբուժական ծառայության իրականացումը,

է. կենդանական ծագման հումքի և մթերքի, կերերի, լրացակերերի , կերային խառնուրդների, կերային հավելումների, ինչպես նաև կենդանիների դիակների ոչնչացման կամ տեխնիկական օգտահանման գործընթացների իրականացումը,

ը. կարանտինի սահմանման ժամանակ բույսերի, բուսական արտադրանքի, կարգավորվող առարկաների վարակազերծման և ոչնչացման գործընթացների իրականացումը:>>

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

11. Կազմակերպությունը՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում՝ /դաշտերում, այգիներում, պահուստային ֆոնդի հողահանդակներում,բույսերի, բուսական արտադրանքի, գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության, պահպանման և իրացման վայրերում ու այլն (անկախ սեփականության ձևից) իրականացնում է հետազոտություններ՝ (մոնիթորինգ) բույսերի կարանտին օրգանիզմների հայտնաբերման, դրանց տարածման արեալի ճշտման, օջախների մեկուսացման և կարանտին միջոցառումների իրականացման նպատակով.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում բույսերի կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման դեպքում կատարում է վնասակար օրգանիզմների վտանգի վերլուծություն:

3) վնասակար օրգանիզմների վտանգի վերլուծության արդյունքների հիման վրա համապատասխան առաջարկություն է ներկայացնում լիազորված պետական մարմին.

4) համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ կարանտին գոտում իրականացնում է բուսասանիտարական միջոցառումներ՝ կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների ոչնչացման, կարգավորվող առարկաների վարակազերծման նպատակով.

5) աջակցում է ֆիզիկական և իրավաբանական անձանց հողային, արտադրական, առևտրային և պահեստային տարածքներում բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման գործում

6) Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է կենդանիների և թռչունների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների ախտորոշման, կանխարգելման, բուժման և վերացման միջոցառումներ,

7) համակարգում է անասնաբուժական ծառայություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրի շրջանակներում անասնահամաճարակային միջոցառումների կազմակերպման աշխատանքները,

8) գյուղատնտեսության բնագավառում խորհրդատվական ծառայությունների մատուցումը,

9) իրականացնում է մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման միջոցառումներ,

10) կենդանական ծագման մթերքի և հումքի անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացում,

11) կազմակերպում է օտարերկրյա պետություններից կենդանիների կարանտինային հատուկ վտանգավոր ու պարտադիր ծանուցման ենթակա ինֆեկցիոն հիվանդությունների Հայաստանի Հանրապետության տարածք ներթափանցումը կանխարգելող միջոցառումների իրականացումը,

12) իրականացնում է անասնաբուծական-անասնաբուժական վճարովի ծառայություններ,

13) իրականացնում է գյուղատնտեսական կենդանիների համարակալման, հաշվառման և անձնագրավորման աշխատանքներ,

14) իրականացնում է վարակված օջախներում ախտահանության, մեխանիկական մաքրման, լվացման և այլ միջոցառումներ՝ ուղղված վարակի օջախի վերացմանը,

15) իրականացնում է մասնագիտական խորհրդատվական ծառայություն,

16) աջակցում է գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմանվորման աշխատանքների կազմակերպման գործընթացին,

17) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

12. Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակներն են՝

1) բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացումը,

2) բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող այլ առարկաների վարակազերծումը,

3) բույսերի կարանտին հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումների իրականացումը,

4) պետական պատվերում չընդգրկված գյուղատնտեսական կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների բուժումը,

5) վարակակիր անասնապահական և այլ օբյեկտների ախտահանումը,

6) գյուղատնտեսական կենդանիների կլինիկական զննումների և հետազոտությունների իրականացումը,

7) գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացում, տոհմանյութ արտադրող կազմակերպություններում կենդանիների բոնիտավորման անցկացումը,

8) խորհրդատվական ծառայությունների մատուցումը,

9) գյուղատնտեսության բնագավառի ուսումնական հաստատությունների ուսանողների ուսումնական պրակտիկայի կազմակերպումը,

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝

1) հիմնադիրը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

2) լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը,

3) գործադիր մարմինը (տնօրենը):

14. Հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) կազմակերպության ստեղծումը.

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

4) օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

15. Լիազորված պետական մարմինը՝

1) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունը.

2) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը.

3) ստեղծում է կազմակերպության հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ.

4) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողովը և հաստատում լուծարման հաշվեկշիռը.

5) իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

6) ձևավորում է կազմակերպության կառավարման մարմինները, վաղաժամկետ դադարեցնում դրանց լիազորությունները.

7) վերահսկողություն է իրականացնում է կազմակերպության գործունեության նկատմամբ.

8) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի (այսուհետ՝ տնօրեն)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, կարգադրությունները և ցուցումները.

9) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

10) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

11) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով և հիմնադրի որոշմամբ համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

12) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, հիմնադրի որոշմամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

16. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմնի ղեկավարը:

17. Տնօրենն իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և պատասխանատվություն կրում Հայաստանի Հանրապետության օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի ու լիազորված պետական մարմնի որոշումների, կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

18. Լիազորված պետական մարմնի ղեկավարը տնօրենի գործառույթներ իրականացնող անձի հետ հիմնադրի անունից կնքում է պայմանագիր:

19. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից:

20. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառված վնասի համար:

21. Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

22. Տնօրենը պարտավոր է չկատարել վերադաս կառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

23. Տնօրենի բացակայության դեպքում՝ նրան պաշտոնի նշանակած մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

24. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում պայմանագրեր.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

5) նշանակում և աշխատանքից ազատում է իր տեղակալներին, կազմակերպության մասնաճյուղերի ղեկավրներին՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հետ.

6) կատարում է աշխատանքի բաշխումն իր տեղակալների միջև,

7) սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

8) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

9) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

25. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող և իր գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

26. Կազմակերպությունն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենքներին, հիմնադրի որոշումներին և սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

27. Հիմնադիրը կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

28. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

29. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

30. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանն անժամկետ և անհատույց ամրացվում է գույք:

31. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու և անհատույց օգտագործման հանձնելու:

32. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից վարձակալության հանձնելու:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի վարձակալության արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն է:

33. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

34. Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

35. Հիմնադրի կողմից գույքը կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

36. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության կողմից օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

37. Կազմակերպության շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հետևյալ ուղղություններով՝

1) կազմակերպության աշխատանքային գործունեությունն ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում,

2) կազմակերպության աշխատողների կենսաապահովման մակարդակի բարձրացում՝ պարգևատրումների, հավելավճարների և խրախուսման միջոցով,

3) կազմակերպության տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում՝ հիմնական միջոցների ձեռքբերում,

4) կազմակերպության աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում և նշված դասընթացներին աշխատողների մասնակցության ապահովում,

5) հիմնադրի կողմից և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ ուղղություններով:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

38. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

39. Կազմակերպությունը պարտավոր է հրապարակել իր տարեկան հաշվետվությունը:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

40. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

41. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

42. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, ինչպես նաև սնանկության հետևանքով:

43. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

44. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: